

Կը նստինք երեքով ջուրի ափին, մարմարեայ վրան բաց խողովակ. տեղ-տեղ կարմրած: Ձայնն ու զովու-թիւնը տեսակ մը ապահովութիւն կը ներշնչեն: Ինքնի-րենս յաճախ եղեր եմ հոս ու փնտռած երրորդ կամ չոր-րորդ դարու ճգնողի հետքեր, որոնցմով այնքան հա-րուստ են գեղին միւս շրջանները:

Քրտինքը թռած է մեր վրայէն, ժայռաստանէն ին-կող շուքը տակաւ կը թանձրանայ, նուազ ընելով չոգին հեւքը ու խեղդուկ հոտը, քանի արեւը պակսի վերերէն:

Ըսի, թէ արձակուած էին անոր լեզուին կապերը:

Ու կ'աւելցնեմ:

- Պէտք է փակագիծ նկատել քարայրին նկատմամբ իր գիտունի փաստարկութիւնները. իր երկրաբանական հաստատումները եւ Գէորգեան Ճեմարանի փառաւոր ննջարանին այնքան անտեղի, բայց այնքան ալ անհրա-ժեշտ նկարագրութիւնները, ինչպէս նաեւ կառուցո-ղական երեւակայութեան իր զեղումները շինարարա-կան, արդիւնաւէտ աշխատանքի մասին, որ վիճակուած է մեր մասսային: Այս բոլորը սակայն հարազատ մարմ-նառութիւններն են անոր իմացական եւ քաղաքագիտա-կան մեծ պատրաստութեան: Իր սկզբունքներուն համե-մատ «առանց իմացական մեծ կուլտուրի չի կայ, չի կարող լինել հարազատ յեղափոխական: Կռիւր առանց բանականութեան՝ մի սխալ աւանդիւրա: Հէնց՝ բժշկու-թիւնը չի բաւարարում մի խղճամիտ յեղափոխականի պարտքերը հանդէպ իր ժողովուրդին»: Այս ամէնը՝ պարզ, վճռական, շատ յստակ տարազներու մէջ, այնքան թեթեւ, որ «Հէնց ուղեղի տեղ գլխում դրումի կուտ կրողն հասկանար»: Այն ատեն չլացուցիչ գեղեցկութիւնը այս առատ ու մատչելի գաղափարներուն: Աւելի ետքը, Սահ-մանադրութեան հռչակումը պիտի ընդհանրացնէր այս տիպարը, շատ աւելի խոր ու իրական, որքան չէ սեւե-ռուած «Փանջունի»ով: Ինծի պիտի տրուէր լայնօրէն շփուիլ սա պրոշիւրեան իմաստութեան աւելի թիփիք (ա-կան) ներկայացուցիչներուն հետ, եռանդուն քարոզիչներ